# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-30 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ARLIVACH | սվիտերներ | սվիտերներ | ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ | Գործվածքը 70+/-5% ակրիլ 30+/-5% բուրդ բաղադրությամբ, NM-28/2 մինչև NM-35/2 մանվածքից, մակերեսային խտությունը՝ առնվազն 350 գրամ/մ2, գույնը՝ մուգ կանաչ, գործվածքի տեսակը՝ Հալֆ Միլանո: Արտաքին տեսքը - Ուղիղ ձևվածքով, երկարաթև, կլոր օձիքով, վզամասը մշակված էլաստիկ մանժետով: Սվիտերի ստորին վերջավորությունը և թևքերի բազկակալները ավարտվում են 6+/-0.5սմ լայնության էլաստիկ 1/1 գործվածքատեսակով: Սվիտերի ուսամասերը և թևքերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | արմնկամասերը վրակարված են առնվազն 220 գրամ մ.քր. մակերեսային խտությամբ, մուգ կանաչ կտորից վրադիրներով: Ուսերին մշակված են 4,5սմ լայնքով և 13սմ երկարությամբ ուսադիրների կամրջակներ, որոնք ուսամասերի հետ կոճկվում են օղակ-կոճակով: Առաջամասի ձախ կողմում կարված է վրադիր գրպան՝ առնվազն 220 գրամ մակերեսային խտությամբ, մուգ կանաչ կտորից, 12+/-1սմ լայնությամբ, 13+/-1սմ երկարությամբ, կպչուն ժապավենով ամրացվող կափույրով: Տարբերանշանները – Աջ թևքին՝ ուսագլխից 7սմ ներքև, կարվում է ՓԾ թևքի տարբերանշանը՝ համապատասխան գունավորումներով ասեղնագործված, Սվիտերի թիկնամասի կենտրոնական հատվածում՝ վզամասի էլաստիկ մանժետից 13սմ հեռավորությամբ կարվում է մուգ փիրուզագույն, 25x8սմ ուղղանկյուն թիկնանշան, որի վրա նարնջագույն թելով ասեղնագործված է «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Սվիտերի ներսի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | միացման կարի մեջ ներկարվում է ստուգիչ պիտակ՝ ներառող՝ Արտադրողի անվանումը, չափ-հասակը, լվացքի մեքենայով կամ ձեռքով լվանալու ջրի ջերմաստիճանը: Կոչման տարբերանշանն իրենցից ներկայացնում է 7X5սմ չափերով հանովի օղագոտի՝ առնվազն 220 գրամ մակերեսային խտությամբ, մուգ փիրուզագույն կտորից: Թույլատրելի շեղումը՝ +/- 2%: Սպայական կազմի ուսադիրների աստղերը ասեղնագործված են ոսկեգույն թելով՝ 13մմ և 20մմ տրամագծերով: Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ-ոց աստղեր: Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա 13մմ-ոց: Աստղերը տեղակայվում են հետևյալ կերպ՝ Գնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը՝ 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: Մայոր – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղի կենտրոնը՝ 45մմ: Կապիտան – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 20մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը՝ 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը՝ 20մմ հեռավորության վրա՝ երրորդի կենտրոնից: Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը՝ 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը՝ 20մմ, երկրորդ աստղը՝ 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը՝ 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից: Ենթասպա – |

տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը՝ 25մմ, երկրորդ աստղը՝ 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից: Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա կարվում է բաց շագանակագույն /բեժ/ գույնի 12մմ լայնությամբ մեկ ժապավեն՝ ուղղահայց դիրքով: Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա կարվում է բաց շագանակագույն /բեժ/ գույնի 12մմ լայնությամբ մեկ ժապավեն՝ հորիզոնական դիրքով: Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, ասեղնագործվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-30 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թելով, ասեղնագործվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Սվիտերների չափսերը և տարբերանշանների քանակներն ըստ կոչումների կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Փաթեթավորումը՝ պիտակավորված պարկերով, ամեն պարկում 10 հատ, յուրաքանչյուր սվիտեր թափանցիկ պոլիէթիլենային տոպրակում: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, չափը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել լաբորատոր փորձարկման եզրակացություն: |